

ստիպէին որ թողու զՔրիստոս, կրկին դառնալով իրենց հաւատոց ուղղութեան: Այսպիսի սուտ և անիրաւ ամբաստանութեան չիկրցաւ հանդուրժել երջանիկ սպտանեալն. նայեցաւ չորս կողմը խռնեալ պաշարեալ անխորհուրդ բազմութեան. և արտասուելից աշուճներն վերցընելով յերկինս՝ դիմեց վստահութեամբ առ Քրիստոս, յորմէ երբէք զատուած բաժնուած չէր հոգւովն ու սրտով, ապաւինեցաւ յաղօթս լուսաւորութեան մեծ Հօրն, որ համբերատար չարչարանօքն և աստուածուայց վարդապետութեամբ՝ անցաւոր ու առօրեայ կենաց փրչալից ու բազմախտանգ ճանապարհին մէջ՝ ցուցեր էր զչաւիղս փրկութեան, և վկայական մահուամբ իրենց արիւնը գնող սրբոց բազմութենէն սորված արիութեամբ՝ համարձակաձայն դաւանեց իր հաւատքը:

Վրայ հասան՝ բռնեցին կապկըպեցին զինքը, ու դատաւորին ներկայացընելով, սուտ վկայիւք ալ կը ջննային իրենց ամբաստանութիւնը հաւատարմացընելէ: Այն բազմավրդով աղաղակին, վրէժխնդիր ու անմեղ արեան ծարաւի նախանձայուզութեան գոռում գոչումին՝ երջանիկ պատանեակն միայն անխռով և անյողդողդ, նախավկային նման պայծառափայլ, հրեշտակատեսիլ և լի հոգւով սրբով, ցըցուց իրեն դէմ եղած ամբաստանութեանց ստութիւնն և հաւատողը անյեղլի հաստատութիւնն:

Այդպիսի անկեղծ խոստովանութեան առջև տկարացան անգոր մնացին սպառնալիք և աղերս, սաստ և խոստմունք, անգութ տանջանք և առատատուր պարգեւաց յուսադրութիւնք: «Եթէ սրով սպանանէք զիս, կ'ըսէր, եթէ կրակով այրէք, խոստմանց ընդարձակ ծովուն մէջ զիս ուզենաք